# ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ՏՈՒԺՎԱԾՆԵ՞Ր, ԻՄԱՑԵ՛Ք ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿԱՑԵ՛Ք ՏՈՒԺՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐ ԲՅՈՒՐՈՅԻ ՄԱՍԻՆ




GEORGE GASCÓN
ՇՐՋԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

da.lacounty.gov @LADAOffice @LACountyDA

## Տուժվածների Իրավունքները

Տուժվածներին պետք է վերաբերվել արժանապատվորեն և հարգանքով: Որպես հանցագործության տուժված կողմ կամ տուժվածի ընտանիքի անդամ, քրեական արդարադատության ողջ գործընթացի ընթացում, Դուք ունեք մի շարք իրավունքներ, որոնցից մի քանիսը ներկայացված են ստորև: **Այդ իրավունքները Ձերն են, սակայն նախքան դրանցից օգտվելը, Դուք պետք է դիմում հայտ ներկայացնեք՝ լրացնելով փաստաթղթեր:** Տուժվածներն ու վերապրածներն իրավունք ունեն՝

- Տեղեկանալու իրենց քրեական գործի կարգավիճակի մասին, ներառյալ հետաքննության, կասկածյալների ձերբակալման և դատավարության մասին:
- Ձեր անունները գաղտնի պահել, եթե Դուք սեռական ոտնձգության, ընտանեկան բռնության, երեխաների նկատմամբ բռնության, հետապնդման կամ ատելության հանցագործության տուժված եք:
- Դատարանում ցուցմունք տալիս ունենալ աջակցող անձ:
- Դատարանից ստանալ հրամաններ, որոնց համաձայն ամբաստանյալները պետք է դադարեն վնասել կամ հետապնդել տուժվածներին:
- Բոլոր դատական գործընթացների ողջամիտ ծանուցման:
- Հաճախել դատական բոլոր լսումներին:
- Խոսելու իրավաբանի հետ:
- Դատարանում պահանջել, որ Ձեզ լսեն, եթե ինչ-որ բան ազդում է Ձեր իրավունքների վրա:
- Դատավճիռի կայացման ժամանակ, դատավորին ասել, թե ինչ ազդեցություն է ունեցել հանցագործությունը Ձեր կամ Ձեր ընտանիքի վրա:
- Ձեր գույքի վերադարձի:
- Մեղադրյալին դատապարտելու դեպքում, խնդրել դատավորին ֆինանսական փոխհատուցման հրաման տալ՝ հանցագործության հետ կապված բոլոր կորուստների համար:
- Տուժվածների համար ծառայությունների բյուրոյի ներկայացուցիչը կարող է օգնել այս ծանուցումները ստանալու հարցում, որի համար Դուք պետք է լրացնեք CDCR 1707 ձևաչափը:
- Տեղեկանալ, եթե ամբաստանյալն ազատ արձակվի Լոս Անջելեսի շրջանի բանտից կամ Կալիֆորնիայի նահանգային բանտից:

**Կալանավայրերի համար.** Տուժվածների համար Տեղեկատվության և Ծանուցման Ամենօրյա ծառայությունը գրանցված անձանց ավտոմատ ծանուցում է կասկածյալի՝ կալանքից ազատվելու մասին: Զանգահարե՛ք **(877) VINE-4-LA ( (877) 846-3452),** որպեսզի գրանցվեք ծանուցման համար: Տուժվածները պետք է նորից գրանցվեն, եթե մեղադրյալը դատապարտվի պետական բանտարկության:

**Բանտերի համար.** Կալիֆորնիայի նահանգային բանտում բանտարկված որևէ մեկի մասին ծանուցում ստանալու համար CDCR-ի 1707 ձևը պետք է լրացվի: Այս ձևը կարելի է ներբեռնել կամ լրացնել առցանց այս կայքում. **cdcr.ca.gov/victim-services/application/**.

Տուժվածների սահմանադրական իրավունքների մասին լրացուցիչ տեղեկություններն առկա են Marsy's Law բրոշյուրում. **da.lacounty.gov/marsys-law**.

## Տուժվածների Համար Ուղիղ Ծառայություններ

Գլխավոր դատախազության՝ Տուժվածների համար Ծառայությունների Բյուրոն հասանելի է Լոս Անջելես շրջանի դատարաններում և ոստիկանական բաժանմունքներում՝ օգնություն տրամադրելու հանցանքից տուժվածներին և նրանց ընտանիքներին: Բյուրոյի ներկայացուցիչներն աջակցում են տուժվածներին՝ նրանց հրատապ կարիքները հոգալու, խորհրդատվական աղբյուրների և ուղղորդումների, ֆինանսական փոխհատուցման համար դատական հրաման ձեռք բերելու և անձնական գույքը վերադարձնելու, քրեական արդարադատության համակարգում կողմնորոշվելու, նրանց դատարան ուղեկցելու և այնտեղ աջակցելու, ինչպես նաև նրանց քրեական գործերի կարգավիճակի վերաբերյալ տեղեկության տրամադրելու հարցերում: Բյուրոյի ներկայացուցիչներն օգնում են բռնության կամ բռնության սպառնալիքի տուժվածներին հայտադիմումների լրացման գործում ՝ Կալիֆորնիայի Տուժվածների Փոխհատուցման Խորհրդից (CalVCB) փոխհատուցում ստանալու համար :

Տուժվածների համար Ծառայությունների Բյուրոյի ներկայացուցիչները հատուկ վերապատրաստություն են անցել օգնելու՝ հանցանքից տուժված երեխաներին, տարեցներին, ընտանեկան և սեռական բռնության ենթարկված, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող տուժված անձանց:

Ներկայացուցիչները կարող են օգնություն տրամադրել մի քանի լեզուներով: Նշված բոլոր ծառայություններն անվճար են: Խնդրում ենք զանգահարել՝ Bureau of Victim Services հետևյալ հեռախոսահամարով՝ **(800) 380-3811:**

## Տեղեկություններ Առանց Փաստաթղթերի Տուժվածների և Վերապրածների Համար

Տուժված կողմից չի պահանջվում ունենալ օրինական ներգաղթային կարգավիճակ՝ ծառայություններից օգտվելու համար: Համաձայն դաշնային օրենսդրության, առանց փաստաթղերի/չգրանցված որոշ տուժվածներ, որոնք ենթարկվել են զգալի ֆիզիկական կամ մտավոր բռնության, իրավասու են դիմել U ոչ ներգաղթային կարգավիճակի վիզայի համար (U Visa): Տուժվածներին՝ U և T վիզաների հայտադիմումների լրացման գործընթացում աջակցող տեղական, շահույթ չհետապնդող գործակալությունների ցանկին ծանոթանալու համար, խնդրում ենք այցելել՝ **da.lacounty.gov/victims/uvisa/uvisa-tvisa-assistance-agencies**.

## Տուժվածների Փոխհատուցման Կալիֆորնիայի Խորհուրդ

### Ո՞վ կարող է փոխհատուցում ստանալ

- Բռնության կամ բռնության սպառնալիքի հանցագործությունների տուժվածները, անկախ նրանից՝ քրեական գործ հարուցված է, թե ոչ:
- Տուժվածի ընտանիքի անդամները կամ համատեղ ապրողները, ներառյալ նրանք, ովքեր ֆինանսապես կախվածության մեջ են տուժավծից:
- Յուրաքանչյուր ոք, ով վճարում է մահացած տուժվածի հուղարկավորության կամ թաղման ծախսերը:
- Անչափահաս տուժվածի որակավորված առաջնային խնամակալը:
- Երեխան, ով ականատես է եղել բռնության ցանկացած հանցագործության:

### Պահանջներ.

- Դիմումը պետք է ներկայացվի հանցագործությունից հետո յոթ տարվա ընթացքում:
- Տուժվածները չպետք է մասնակցած լինեն հանցագործությանը:
- Տուժվածները պետք է համագործակցեն իրավապահ մարմինների և դատախազության հետ:

### Փոխհատուցվող ծախսեր.

- Բժշկական, ատամնաբուժական և հիվանդանոցային ծախսեր:
- Հոգեկան առողջական խորհրդատվություն:
- Տեղափոխություն բնակության նոր վայր:
- Հուղարկավորության և թաղման ծախսեր:
- Հանցագործության վայրի մաքրում:
- Աշխատավարձի կամ աջակցության կորուստ:
- Աշխատանքի վերապատրաստում և վերականգնում:
- Տանն անվտանգության համակարգի տեղադրում:

Փոխհատուցում ստանալու համար CalVCB-ն պահանջում է, որ կորուստները կապված լինեն հանցագործության հետ: Փոխհատուցման չափը կարող է տարբեր լինել, թարմացված տեղեկատվության համար խնդրում ենք այցելել **victims.ca.gov**: Փոխհատուցման այլ աղբյուրներ, ինչպիսին է ապահովագրությունը, պետք է առաջինն օգտագործվեն: CalVCB-ն չի կարող վճարել որևէ ծախսի համար, որը կատարվել է այն ժամանակ, երբ տուժվածը գտնվում է պայմանական վաղաժամկետ ազատման, փորձաշրջանի կամ ազատումից հետո համայնքի վերահսկողության տակ բռնության հանցագործության համար, կամ երբ բանտարկված է կամ պետք է գրանցվի որպես սեռական հանցագործ: CalVCB-ի մասին հավելյալ/լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարե՛ք հետևյալ անվճար համարով՝ **(800) 777-9229**. Կարող եք նաև ստանալ տեղեկատվություն ծրագրի մասին **victims.ca.gov** կայքում կամ գրելով CalVCB-ին, փոստարկղ 3036, Սակրամենտո, Կալիֆորնիա 95812-3036:

Շրջանային Դատախազության Տուժվածների Համար Ծառայությունների Բյուրոն կարող է հանցագործության տուժվածներին աջակցել CalVCB-ից ծառայությունների համար դիմելու հարցում: Արդեն կատարված դիմումների կամ դիմումի ընթացքին հետևելու համար խնդրում ենք զանգահարել Տուժվածների Համար Ծառայությունների Բյուրոյի Հայցերի Ստուգման Ստորաբաժանում՝ հետևյալ հեռախոսահամարով **(800) 492-5944**:

CVKYR(ARM) 06/23

## Օգնել Հանցագործության Տուժածներին Վերապրել

Խորհրդատվական Ուղղորդումների Հարցում

Ճգնաժամային միջամտության հարցում

Գործի Կարգավիճակի Մասին Ծանուցման Հարցում

Շտապ Աջակցության Հարցում

Վերականգնման Աջակցության Հարցում

Դատարան Ուղեկցելու Հարցում

Լոս Անջելեսի Շրջանային Դատախազության Տուժածների Համար Ծառայությունների Բյուրո
**da.lacounty.gov/victims**

**(800) 380-3811**

## Տուժածների Կենտրոններ

**Ժամեր.**
**Երկուշաբթիից ուրբաթ՝ 08:00-ից 17:00**

**Կենտրոնական -**
**Լոս Անջելես (կենտրոն)** ................(213) 974-7490
210 W. Temple St., Rm. 12-514
Los Angeles, CA 90012
**Հատուկ ստորաբաժանումներ**
Ընտանեկան բռնություն ............... (213) 257-2304
Ընտանեկան բռնություն ............... (213) 257-2173
Ֆինանսական/խարդախության
և կիբերհանցագործություններ.. (213) 257-2268
Համայնքային բռնության
նվազեցում ....................................... (213) 257-2034
Ատելության և թիրախային
հանցագործություններ................. (213) 257-2268
Տուժածների համար
ծառայություններ
K-9 ստորաբաժանում ..................... (213) 952-2672
Ցմահ դատապարտյալի և
հետմեղադրական
դատավարություն.......................... (213) 974-4110
Վերադաստիարակման ծրագիր ...... (213) 893-7899
Մարդկանց սեռական
թրաֆիքինգի բաժին...................... (213) 257-2076
Սեռական
հանցագործություններ................. (213) 257-2054
Զոհերի իրավունքների
աջակցություն ................................. (213) 257-2101

**Airport (Գլխավոր դատախազության Օդանավակայանի մասնաճյուղ)** ................................... (310) 727-6516
1701 S. La Cienega Blvd., Ste. 601
Los Angeles, CA 90045

**Alhambra (Ալհամբրա)** ................. (626) 308-5417
150 W. Commonwealth Ave.
Alhambra, CA 91801

**Antelope Valley (Անտելոպ Վելլի)** (661) 974-7716
42011 4th St. W., Rm. 3530 (661) 974-7717
Lancaster, CA 93534

**Compton (Քոմփթոն)** ..................... (310) 603-7579
200 W. Compton Blvd., Rm. 700 (310) 603-7538
Compton, CA 90220
**Հատուկ Ստորաբաժանում**
Քոմփթոն համայնքի
բռնության նվազեցում .................. (310) 603-7127

**East Los Angeles (Արևելյան Լոս Անջելես)** ............. (323) 780-2045
4848 E. Civic Center Way, Rm. 201
Los Angeles, CA 90022
**Հատուկ Ստորաբաժանում**
Իսթլեյք Ջուվենայլ ......................... (323) 780-2041

**El Monte (Rio Hondo) (Էլ Մոնտե (Ռիո Հոնդո))** ................ (626) 575-5565
11234 E. Valley Blvd., Rm. 110
El Monte, CA 91731

**Inglewood (Ինգլվուդ)** ..................... (310) 419-6764
1 Regent St., Rm. 405
Inglewood, CA 90301

**Long Beach (Լոնգ Բիչ)** ................... (562) 247-2068
275 Magnolia Ave., Ste. 3195 (562) 247-2069
Long Beach, CA 90802
**Հատուկ Ստորաբաժանում**
Անչափահասների իրավունքների
պաշտպանության
ծառայություններ ........................... (562) 247-2034

**Norwalk (Նորվոլք)** ......................... (562) 807-7230
12720 Norwalk Blvd., Rm. 201 (562) 807-7464
Norwalk, CA 90650

**Pasadena (Փասադենա)** ................ (626) 356-5783
300 E. Walnut St., Rm. 103 (626) 356 -5727
Pasadena, CA 91101

**Pomona (Պոմոնա)** ......................... (909) 716-4133
400 Civic Center Dr., Rm. 201 (909) 716-4140
Pomona, CA 91766

**San Fernando (Սան Ֆերնանդո)** .(818) 898-2406
900 3rd St., 3rd Fl. (818) 898-2799
San Fernando, CA 91340

**Torrance (Տորանս)** ........................ (310) 222-3599
825 Maple Ave., Rm. 190
Torrance, CA 90503

**Van Nuys (Վան Նույս)** .................... (818) 464-5233
6230 Sylmar Ave., Rm. 201 (818) 464-5234
Van Nuys, CA 91401

**West Covina (Citrus) (Արևմտյան Կովինա (ցիտրուս))** ................................... (626) 813-3220
1427 W. Covina Pkwy., Rm. 105
West Covina, CA 91790

## Զոհերի Համար Նախատեսված Վայրեր Իրավապահ Մարմիններում

**LAPD Central Division (LAPD Կենտրոնական ստորաբաժանում)** .............................. (213) 974-6873
251 E. 6th St.
Los Angeles, CA 90014

**LAPD Hollywood Division (Լոս Անջելեսի ոստիկանության բաժնի Հոլիվուդի ստորաբաժանում)** .............................. (323) 871-1184
1358 N. Wilcox Ave.
Los Angeles, CA 90028

**LAPD Rampart Division (Լոս Անջելեսի ոստիկանության բաժնի Ռամպարտի ստորաբաժանում)** .............................. (213) 483-6731
1401 W. 6th St.
Los Angeles, CA 90017

**LAPD South Bureau Homicide (Լոս Անջելեսի ոստիկանության բաժնի սպանությունների մասով հարավային բյուրո)** ............ (323) 786-5151
7600 S. Broadway
Los Angeles, CA 90003

**LAPD Southeast Division (Լոս Անջելեսի ոստիկանության բաժնի Հարավարևմտյան ստորաբաժանում)** ............................ (323) 972-1021
145 W. 108th St., Rm. 107
Los Angeles, CA 90061

**LAPD Southwest Division (Լոս Անջելեսի ոստիկանության բաժնի Հարավարևմտյան ստորաբաժանում)** ............................ (626) 514-1254
1546 Martin Luther King Blvd.
Los Angeles, CA 90062

**LASD Santa Clarita (Լոս Անջելեսի ոստիկանության բաժին Սանտա Կլարիտա)** ......................................... (661) 287-5633
26201 Golden Valley Rd.
Santa Clarita, CA 91350

**LASD West Hollywood (Լոս Անջելեսի ոստիկանության բաժին Արևմտյան Հոլիվուդ)** ............................................................ (310) 358-4057
780 N. San Vicente Blvd.
Los Angeles, CA 90069

**LASD Homicide Bureau (Լոս Անջելեսի ոստիկանության բաժնի սպանությունների մասով բյուրո)**................................... (323) 890-5656
1 Cupania Cir.
Monterey Park, CA 91755

**LASD Special Victims Bureau (Լոս Անջելեսի ոստիկանության բաժնի հատուկ զոհերի ստորաբաժանում)**
**Whittier (Ուիթթիեր)**........................ (562) 946-8233
11515 Colima Rd.
Whittier, CA 90604
**Antelope Valley (Անտելոպ Վելլի)** ... (661) 471-1515
1010 W. Avenue J
Lancaster, CA 93534

**LASD South Los Angeles (Լոս Անջելեսի ոստիկանության բաժին Հարավային Լոս Անջելես)** ......................................... (323) 820-6860
1310 W. Imperial Hwy.
Los Angeles, CA 90044

**Los Angeles City Attorney Victim Assistance Program (Լոս Անջելեսի քաղաքային փաստաբանի զոհերի աջակցության ծրագիր)**
Իրավաբաններ .................................. (213) 978-2097

Սկանավորե՛ք այստեղ՝ այս բրոշյուրն առցանց դիտելու համար: